



# FOREST SUMMIT Global Action and Armenia

Co-Presented by

**AUA** ACOPIAN CENTER  
for the ENVIRONMENT

**ARMENIA**  
TREEPROJECT

Media Contact: T.K. Skenderian

Conventures, Inc.

[tskenderian@conventures.com](mailto:tskenderian@conventures.com)

617-204-4239

## **Դաշտային այցեր `«Գազաթաժողով հանուն անտառների. գլոբալ ջանքերն ու Հայաստանը» համաժողովի շրջանակում**

*Անդրանիկ համաժողովը մասնակիցների և ՉԼՄ-ների ներկայացուցիչների ուշադրությանը կներկայացնի Հայաստանում իրականացվող անտառվերականգնման աշխատանքները*

«Էյ Թի Փի»-ն և Հայաստանի ամերիկյան համալսարանի Յակոբեան բնապահպանական կենտրոնը ներկայացնում են «Գազաթաժողով հանուն անտառների. գլոբալ ջանքերն ու Հայաստանը» խորագրով համաժողովի շրջանակում հոկտեմբերին կազմակերպվող դաշտային այցերի վերաբերյալ մանրամասներ: Հոկտեմբերի 20-ից 23-ը ընթացող քառօրյա միջոցառումը կստեղծի անտառվերականգնման բնագավառում առաջատար մասնագետների միջև գիտելիքների փոխանակման, երկխոսության և կապերի հաստատման հնարավորություններ:

Դաշտային այցերի ընթացքում ոլորտի առաջատարները հնարավորություն կունենան այցելել «Դիլիջան» ազգային պարկ և Հայաստանի տնկման վայրեր, որտեղ հողի մեջ դրված յուրաքանչյուր տնկի արհեստավարժ աշխատակիցների կողմից ապահովվում է երկրի բուսականության աճը խթանող անհրաժեշտ խնամքի բոլոր միջոցառումներով: Լինելով շրջափակված երկիր՝ Հայաստանը, ի թիվս Փարիզյան համաձայնագրի շրջանակներում ստանձնած այլ պարտավորությունների, հանձն է առել մինչև 2050 թվականը երկրի անտառածածկ տարածքների մակերեսը ավելացնել չհասցնելով 20%-ի:

Հյուրերը հոկտեմբերի 21-ին կայցելեն Հայաստանի ամենագեղատեսիլ հյուսիսային շրջաններից մեկի՝ Տավուշի մարզում գտնվող «Դիլիջան» ազգային պարկ: Այն զբաղեցնում է շուրջ 33,765 հեկտար տարածք և առանձնանում է հարուստ ու յուրօրինակ կենսաբազմազանությամբ, անտառային լանդշաֆտներով և մշակութային հուշարձաններով: Մասնակիցները Ազգային պարկի փորձագետների ուղեկցությամբ կշրջեն Պարզ լճի շրջակայքում և կծանոթանան պարկի տարածքում առկա շուրջ 1150 բուսատեսակների, 55 կաթնասունների և 190 թռչնատեսակներին: «Դիլիջան» ազգային պարկը հանդիսանում է ՀՀ կարմիր գրքում գրանցված բուսական և կենդանական աշխարհի մի շարք հազվագյուտ և վտանգված տեսակների բնակատեղի: Զբոսավարները հյուրերին կծանոթացնեն նաև տեղանքի



# FOREST SUMMIT

## Global Action and Armenia

Co-Presented by

**AUA** ACOPIAN CENTER  
for the ENVIRONMENT

**ARMENIA**  
TREEPROJECT

Media Contact: T.K. Skenderian

Conventures, Inc.

[tskenderian@conventures.com](mailto:tskenderian@conventures.com)

617-204-4239

պատմությանը, ինչպես նաև ներկայում պարկի առջև ծառացած խնդիրներն ու դրանց հնարավոր լուծումների վերաբերյալ տարբերակները:

Ի թիվս այլ բաների, հյուրերը կծանոթանան նաև վերջին տարիներին Դիլիջանում Էկոտուրիզմի զարգացման տեմպերի զգալի աճին: Նոր արշավային արահետների ստեղծումից մինչև zip line-ի և թիավարվող նավակների առկայությունը, նրանք կուսումնասիրեն ապագայում ազգային պարկի պաշտպանության և պահպանման համար զբոսաշրջության ներուժի և դերի կարևորությունը:

Մասնակիցները նաև կհյուրընկալվեն Մարգահովիտ գյուղում, որտեղ նրանք կշրջեն «Էյ Թի Փի»-ի Օհանյան բնապահպանական կրթության կենտրոնի և 2007թ.-ին ստեղծված՝ Հրանտ Դիևքի անվան անտառի տարածքով: Հյուրերը նաև կայցելեն Միրաք ընտանիքի անվան անտառվերականգնման տնկարան և ականատես կլինեն տասնակ ծառատեսակների և բույսերի, որոնք աճեցվում և խնամվում են հիմնադրամի 15 տեղաբնակ աշխատակիցների կողմից: Միրաք տնկարանը հիմնադրումից (2005թ.) մինչ այժմ հանդիսանում է Հայաստանի հյուսիսում վերատնկած միլիոնավոր ծառերի աճեցման և բազմացման վայրը:

«Մեզ համար մեծագույն պատիվ է Հայաստանի հրավիրել անտառվերականգնման ոլորտում համաշխարհային առաջատարների և նրանց ներգրավել անտառվերականգնման գործընթացներում: Թեև մեր տնկած յուրաքանչյուր ծառ իր պատմությունն ունի, այնուամենայնիվ, մեր առաքելության և անտառվերականգնման աշխատանքները լավագույնս ներկայացնում են մեր թիմն ու գիտնականները», - կշեց «Էյ Թի Փի»-ի գործադիր տնօրեն Ջինմարի Փափեյանը:

Դաշտային այցելություններից զատ, «Գագաթաժողով հանուն անտառների. գլոբալ ջանքերն ու Հայաստանը» խորագրող համաժողովը կընդգրկի պանելային և խմբային քննարկումներ, հիմնական զեկուցող՝ Օրեգոնի պետական համալսարանի դոկտոր Էնթոնի Դեյվիսի ուղերձը, ինչպես նաև կընձեռի կապերի հաստատման լայն հնարավորություններ:

Այս աշուն «Էյ Թի Փի»-ն Հայաստանում կտնկի իր վեց միլիոներորդ ծառը: Համաժողովի, ՀԱՀ Յակոբեան բնապահպանական կենտրոնի և «Էյ Թի Փի»-ի վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք՝ <http://forestsummit.am>.



# FOREST SUMMIT Global Action and Armenia

Co-Presented by

**AUA** ACOPIAN CENTER  
for the ENVIRONMENT

**ARMENIA**  
TREEPROJECT

Media Contact: T.K. Skenderian

Conventures, Inc.

[tskenderian@conventures.com](mailto:tskenderian@conventures.com)

617-204-4239

## «Էյ Թի Փի»-ի մասին

«Էյ Թի Փի» բարեգործական հիմնադրամը շահույթ չհետապնդող կազմակերպություն է՝ տեղակայված Ուորուրն և Երևան քաղաքներում: Մենք իրականացնում ենք կենսական նշանակություն ունեցող բնապահպանական ծրագրեր՝ Հայաստանի քաղաքներում և գյուղերում: 1994թ.-ից «Էյ Թի Փի»-ն հսկայական աշխատանք է իրականացրել անապատացման դեմ պայքարում՝ գործելով կենսաբազմազան, սակայն վտանգված Կովկասյան տարածաշրջանում: Ծրագրի շրջանակներում տնկվել և վերականգնվել են ավելի քան 5700000 ծառեր և ստեղծվել բազմաթիվ աշխատատեղեր: «Էյ Թի Փի»-ն նպաստում է Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացմանը՝ ներգրավելով միջոցներ անտառների վերականգնումը ֆինանսավորելու համար: Մեր կողմից աճեցված և տնկված ծառերը կենսական նշանակություն ունեն. նրանք մարդկանց ապահովում են սննդով, փայտով, բնապահպանական բարիքներով և տնտեսության աճի համար անհրաժեշտ հնարավորություններով:

«Էյ Թի Փի»-ն ունի ավելի քան 80 աշխատակից Հայաստանում: Երևանյան մասնաճյուղն ապահովված է չորս ժամանակակից տնկարաններով և բնապահպանական կրթության համար նախատեսված երկու կենտրոններով: Երևանյան մասնաճյուղը համագործակցում է համայնքային բնակչության հետ՝ միկրո-ձեռնարկությունների (տնամերձ տնկարաններ) ստեղծման միջոցով, հիմնում է հանրային օգտագործման կանաչ գոտիներ, անտառապատման միջոցով վերականգնում է էռոզացված անտառային հողեր: Նոր անտառներ տնկելու նպատակով հիմնադրամը ժամանակավոր աշխատատեղեր է ստեղծում հարյուրավոր մարդկանց համար: Ավելին իմանալու համար այցելեք՝ [www.armeniatree.org](http://www.armeniatree.org)

## ՀԱՀ Յակոբեան բնապահպանական կենտրոնի մասին

ՀԱՀ Յակոբեան բնապահպանական կենտրոնը (ՅԿԲ) Հայաստանի ամերիկյան համալսարանի հետազոտական կենտրոն է: ՀԱՀ ՅԿԲ-ն խրախուսում է բնական միջավայրի պահպանությունն ու վերականգնումը՝ հետազոտության, կրթության և հասարակության հետ կապերի միջոցով: ՀԱՀ ՅԿԲ-ի աշխատանքային ուղղվածություններն են բնական պաշարների կայուն կառավարումը, կենսաբազմազանությունը, ստեղծված շրջակա միջավայրի կանաչապատումը, մաքուր էներգիան և էներգաարդյունավետությունը, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաներն ու շրջակա միջավայրը: